# ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ
# ԱՀԱ ԱՍՏԾՈՒ ԳԱՌԸ

## ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Ինչու՞ էր Հիսուսն այնտեղ գտնվում.

Հիսուսը հրավիրված էր Կանայի հարսանիքին իր աշակերտների հետ, և մենք գիտենք որ այդ հարսանիքին ներկա են եղել առնվազն հինգ աշակերտ՝ Անդրեասը, Սիմոն Պետրոսը, Փիլիպոսը, Նաթանայելը և մի աշակերտ որի անունը նշված չէ (Հովհ. 1:35): Հրավիրված էր նաև Հիսուսի մայրը: Մենք չգիտենք թե ինչու՞ էին Հիսուսին հրավիրել: Մարիամը, հավանաբար ուներ մտերիմ կապ այս ընտանիքի հետ, քանի որ նա շատ մտահոգված էր, երբ գինին վերջացավ և կարծես նաև ուներ որոշ պատասխանատվություն սննդի սպասարկման անձնակազմին հանձնարարություններ տալու: Նշենք, որ Հովհաննեսի Ավետարանում Մարիամը միայն երկու անգամ է նշվում, այստեղ մեկ անգամ և հաջորդ անգամ խաչի ներքո, երբ Հիսուսը պատվիրեց իր աշակերտին խնամելու իր մորը: Մենք գիտենք, որ Հիսուսի աշակերտներից մեկը՝ Նաթանայելը, եկել էր Կանայից և հավանաբար կճանաչեր այդ ամուսիններին:

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. Հով. 2.1-11

*1 Եւ երրորդ օրը հարսանիք էր Գալիլեայի Կանայում, եւ Հիսուսի մայրն այնտեղ էր: 2 Հարսանիքի*
*հրավիրուեցին նաեւ Հիսուս եւ իր աշակերտները: 3 Եւ երբոր գինին պակասեց, Յիսուսի մայրն ասեց*
*նորան. Գինի չունեն: 4 Եւ Յիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ ժամանակը դեռ չի*
*հասել»: 5 Նրա մայրը սպասաւորներին ասաց. Ինչ որ ձեզ ասի, արէ՛ք: 6 Այնտեղ վեց քարէ*
*կարասներ կային Հրէաների մաքրուելու համար, նրանցից յուրաքանչյուրը շուրջ հարյուր լիտր*
*տարողություն ունէր: 7 Հիսուսը նորանց ասեց. **Այդ կարասները ջրով լցրէք.** Եւ լցրին բերնէբերան:*
*8 Եւ նորանց ասեց. Հիմա առէք եւ տարէք սեղանապետին. եւ նորանք տարան: 9 Եւ երբ*
*սեղանապետը ճաշակեց գինի դարձած ջուրը ու չէր իմանում, թէ որտեղից է (բայց սպասաւորները,*
*որոնք ջուր լցրին, գիտէին), սեղանապետը փեսային կանչեց, 10 Եւ նորան ասեց. Ամէն մարդ նախ*
*ընտիր գինին է մատուցում, եւ երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը. Իսկ դու ընտիր գինին մինչեւ*
*հիմա պահել ես: 11 Յիսուս այս առաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում որպէս սկիզբը*
*նշանների եւ յայտնեց իր փառքը, ու նրա աշակերտները հաւատացին նրան:*

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.

### Հովհաննեսն իր ավետարանում գրել է 7 նշանների մասին.

1. Քրիստոսը ջուրը գինու է վերածում. 2.1
2. Ազնվականի որդուն բժշկում. 4.46
3. Քրիստոսը մի անդամալույծի է բժշկում. 5.1
4. Հինգ հազար մարդ է կերակրում. 6
5. Հիսուսը քայլում է ջրի վրայով. 6
6. Հիսուսը բժշկում է կույրի աչքերը. 9.1-7
7. Հիսուսը հարություն է տալիս մեռած Ղազարոսին. 11

Հովհաննես 2.1-12 - Ահա Աստծու Գառը, Կանայի հարսանիքը

Հովհաննես 2.13-25 – Ահա Աստծու Գառը տաճարը

Հովհաննես 3.11-18 – Ահա Աստծու Գառը, Գողգոթան

## ՀՐԱՇՔԻ ՆՊԱՏԱԿԸ:

*4 Եւ Յիսուս նրան ասաց. …իմ ժամանակը դեռ չի հասել:*

***22 Արդ երբոր նա մեռելների միջից հարություն առավ, նորա աշակերտները հիշեցին, թէ նա ասեց նորանց այս բանը. եւ հավատացին գրքին՝ եւ այն խօսքին որ ասեց Հիսուսը: 23 Եւ երբոր Երուսաղէմում էր զատկի տօնին, շատ մարդիկ հավատացին նորա անունին. տեսնելով նրա այն նշանները, որ անում էր:***

### ՈՐՈՇ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅՍ ԴԱՏԱՐԿ ԿԱՐԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

- Կարևոր է իմանալ, որ ամեն մի կարասի կշիռը դատարկ ժամանակ եղել է 190 pound, 86 կիլոգրամ.
- Ամեն մի կարասի մեջ կարող էին լցնել 30 gallons (գալոն) ջուր, 113 լիտր:
- 6 կարասների մեջ կարող էին լցնել 150 gallons ջուր, 567 լիտր:
- Դա մոտավորապես 150 մարդու համար բավարար ջուր էր:
- Եվ բոլոր կարասների կշիռը լցված ժամանակ, կազմում էր մոտ 1800 pounds, 817 կիլոգրամ.

### ՈՐՈՇ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

- Մենք չգիտենք, թե քանի հոգի է ծառայել այս կարասները լցնելու (հավանաբար ջուրը վերցրել են ջրհորից) և սպասարկելու համար: Այդ ժամանակաշրջանի ջրհորները եղել են մոտ մինչև 60 (200 ft.) մետր խորությամբ և ջուրը կարող էին այնտեղից հանել փոքր դույլերի օգնությամբ:
- Առնվազը 20 մարդ էր պետք որպեսզի այդ կարասները տանեին ջրհոր, որի հեռավորությունը կլիներ մոտ կես կիլոմետր:
- Այս մեծ կարասները նրանք չէին կարող իջեցնել ջրհորի մեջ: Դե պատկերացրեք, ք՞անի անգամ են փոքրիկ դույլը իջեցրել ջրհորի մեջ որպեսզի կարողանային այդ մեծ կարասները բերնեբերան ջրով լցնել: Եվ ք՞անի ժամ է տևել ջուրը լցնելու ընթացքը:
- Բայց դեռ դա բավական չէր: Հիշեցնեմ, որ Տերը պատվիրեց կարասների մեջ ջուրը լցնեն բերնեբերան:

*Սաղ. 23.5 - Դու իմ առաջին սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց. դու իմ գլուխն օծում ես իւղով. իմ բաժակը խիստ լիքն է:*

- *«Հրեական մաքրագործման ծիսակարգում» օգտագործվող սափորների ջուրը գինու վերածելով՝ Հիսուսը կատարում է նշանակալից գործ՝ Նա Մովսեսի օրենքը վերածում է Ավետարանի: Ինչպես Հովհաննեսն ասում է «որովհետև օրենքը Մովսեսի միջոցով տրվեց, իսկ շնորհն ու ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի միջոցով եղան»:*

## I. ՀԻՍՈՒՍԸ ԼՑՐԵՑ ՎԵՑ ՀԻՆ ԿԱՎԵ ԱՄԱՆՆԵՐԸ ՆՈՐ ԳԻՆՈՎ:

***6 Այնտեղ վեց քարէ կարասներ կային Հրէաների մաքրուելու համար, նրանցից յուրաքանչյուրը շուրջ (75 լիտրից) հարյուր լիտր տարողություն ունէր:***

*6-րդ օրը: Եւ Եհովա Աստուած հողի փոշուց շինեց մարդը. Եւ նորա ռնգացը մէջ կենդանության շունչ փչեց, եւ մարդը կենդանի հոգի եղաւ: (Ծնն. 2.7)*

*2 Կոր. 4.7 - Բայց այս գանձն ունենք կաւէ ամանների մէջ, որպէսզի զօրության գերազանցությունը Աստծուց լինի եւ ոչ մեզնից:*

*Հռ. 15.13 - Եւ Հոյսի Աստուածը լեցնէ ձեզ ամեն ուրախությունով եւ խաղաղությունով, հավատալու մէջ, որ հուսով ավելանաք Սուրբ Հոգու զօրութիւնով:*

### ԲՐՈՒՏԻ ԳՈՐԾԸ ԱՆԹԵՐԻ Է:

*Եր. 18.6 - 6* ***Մի՞թէ ես չեմ կարող այս բրուտի պէս անել ձեզ, ով Իսրայէլի տուն, ասում է Տէրը.*** *ահա ինչպէս որ կաւն է բրուտի ձեռքին, նոյնպէս էք դուք իմ ձեռքին, ով Իսրայէլի տուն:*

## II. ԱՍՏՎԱԾ ՄԵԶ ՏԱԼԻՍ Է ՄԵՐ ՆԱԽԱՏԵՍԱԾԻՑ ԱՎԵԼԻ ՇԱՏ:

*...Եւ երբ սեղանապետը ճաշակեց գինի դարձած ջուրը... 10 Եւ փեսային ասեց. Ամէն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, եւ երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը. Իսկ դու ընտիր գինին մինչեւ հիմա պահել ես:*

- ***Ես կարող եմ ձեզ խոստանալ, եղբայրներ, ձեր կյանքի ամենավերջին պահին, ավելի ճիշտ՝ ձեր կյանքի առաջին պահին՝ ասելով. «Նա պահեց երբևէ եղած լավագույն գինին»: Երբ տեսնեք Հիսուսին դեմ առ դեմ և մտնեք Տիրոջ հետ ամենաջերմ հաղորդակցության մեջ, առանց որևէ բան խանգարելու կամ շեղելու ձեզ, այն ժամանակ կասեք. «Լավագույն գինին պահվում է մինչ այժմ» (Սփուրջեն):***

  - *Մովսեսն Իսրայելին Կարմիր ծովից ճանապարհ հանեց, ու նրանք հասան Սուր կոչված անապատը: Երեք օրվա ճանապարհ գնացին անապատի միջով, բայց ջուր չգտան: Եկան Մեռա, բայց չկարողացան խմել Մեռայի ջրից, որովհետև այն դառն էր. դրա համար այդ վայրը կոչվեց Մեռա: Ժողովուրդը տրտնջաց Մովսեսի դեմ՝ ասելով. «Ի՞նչ խմենք»: Մովսեսն աղաղակեց Տիրոջը, և Տերը նրան մի փայտ ցույց տվեց: Մովսեսն այն գցեց ջրի մեջ, և ջուրը քաղցրահամ դարձավ: Ելից 15.22-25*

  - *Եվ նա գնաց ջրերի աղբյուրի մոտ, աղ գցեց այնտեղ և ասաց. «Այսպես է ասում Տերը. Ես բժշկեցի այս ջրերը, այսուհետև այստեղից այլևս մահ և անպտղություն չի լինի»: Դ Թագ. 2.21*

***Այսպիսով, ինչպե՞ս Հիսուսը ջուրը վերածեց գինի:***

*Հիսուսը նորանց **ԱՍԵՑ**. Այդ կարասները ջրով լցրէք.*

## III. ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԵԾ ՈՒԺ ԿԱ – ԱՅԴ ՈՒԺՆ ԷԼ ՀՐԱՇՔՆԵՐ Է ԳՈՐԾՈՒՄ:

*Գործ. 2.1,44 - 1 Եւ երբոր Պենտէկոստէի օրերը լրացան, ամենքը միաբան մէկտեղ էին:*
*44 Եւ բոլոր հաւատացեալներն իրար հետ մէկտեղ էին, եւ ամեն բան հասարակաց ունէին:*

- ***Որքա՞ն ժամանակ եք տրամադրում շաբաթվա ընթացքում հաղորդակցվելու Աստծո և մյուս հավատացյալների հետ: Դուք զգու՞մ եք Աստծո զորությունը Ձեր կյանքում:***

## ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ